



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 21 ՅՈՒՆԻԱՐ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն ԿԲԱՐԻՍ ԽՈՐԻԵԼ ԵՆ ԽՍԵԼ ԵՆ ԳՈՐԾԵԼ ԱՐԱՅԻ ՔՈ յամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեալս. եւ ողորմեալ ՔՈ արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՄՈՆԻ 2

ԱՄԲԱՐԻՇՏԻՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԸ

Անուղղայ մարդիկ այսպէս խորհեցան իրենց սրտին մէջ ըսելով.
«Մեր կեանքը կարն է եւ ցաւերով լեցուն.
Եւ երբ մարդ հասնի իր վախճանին,
ոչ մէկ փրկութիւն չկայ, եւ չկայ մէկը,
որ վերադարձած ըլլայ մահուան գերեզմանէն:
Մենք պատահաբար ենք ծնուած, եւ ասկէ յետոյ ալ
չեղածներու պէս պիտի ըլլանք:
Արդ, եկէ՛ք վայելենք այն բարիքները, որ կան.
Եկէ՛ք յագեանա՛նք պէս-պէս գինիներով:
Եկէ՛ք անհրաւութեամբ բռնադատենք.
Թող մեր ուժը դառնայ արդարութեան օրէնքը:
Այսպէս խորհեցան եւ խարուեցան ամբարիշտները,
որովհետեւ իրենց չարութիւնը կուրցուցած էր գիրենք:
Զնանչցան Աստուծոյ խորհուրդները
եւ չակնկալեցին ոչ սրբութեան վարձը
եւ ոչ ալ ընտրեցին անարատ հոգիներու պատիւը»:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրբ Երրորդութիւն, սուր աշխա՛հա խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղեղոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՂՈԹՔ

Ամենախնամ եւ միշտ ողորմած Տէր,
քու անսահման բարերարութիւններուդ վրայ՝
նաեւ մարդոց պարգևեցիր
Աստուածաշունչ Կրակարաններուդ մէջ դրոշմուած
ճշմարիտ օրէնքդ, որպէսզի անկէ սորվելով քու սուրբ կամքիդ
արտացոլացումը եղող պատուիրաններդ,
զանոնք կատարենք միշտ քու կամքիդ համաձայն,
մեր հոգիներու փրկութեան համար. ամէն:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ է՛ն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ է՛ն արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ, ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԵՒ ԾՆՆԴՈՑ ԳԻՐՔԻ



I. Ընդհանուր Հասարարումներ Աստուածաշունչի Մասին.-

- 1.- Աստուծոյ յայտնութիւնն է:
- 2.- Աստուած եւ մարդ յարաբերութեան պայմանութիւնն է:
- 3.- Աստուծոյ Ուխտին գիրքն է:
- 4.- Քրիստոսի մասին վկայութիւն եւ Քրիստոսի ներկայութիւնն է:
- 5.- Աստուծոյ Արքայութեան պարկերացումը եւ անոր կատարման նախապարկերացումն է:
- 6.- Աստուծոյ կենդանի Խօսքն է:
- 7.- Աստուծոյ փրկութեան պատգամն է:
- 8.- Աստուծոյ Եկեղեցիին առաջնորդութեան համար տրուած գիրքն է:

Այլ խօսքով, Աստուածաշունչին նպատակն է ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ:

II. Ներածութիւն Հին Կրակարանի

Երբայեցիները Աստուածաշունչին կու տան «Թ - ա - ն - ա - խ» Թանախ անուանումը:

Կազմուած «Թորահ», «Նրվիիմ» եւ «Խրթուվիմ»:

Թորահ կը նշանակէ Օրէնք, Նրվիիմ՝ Մարգարէներ, իսկ Խրթուվիմ՝ Գիրքեր:

Ուրեմն երբայական դասաւորումը ունի հետեւեալ պարկերը.-

ա. Օրէնքի գիրքեր

բ. Մարգարէական գիրքեր

գ. Գիրքեր, որ իր մէջ կը ներառեն զանազան նիւթեր, պատմական, բանաստեղծութիւններ, իմաստասիրութիւն, եւ նոյնիսկ, Քրիստոնէական առումով, կարգ մը մարգարէական գիրքեր:

Իսկ Քրիստոնէական դասաւորումն է.-

ա. Օրէնքի գիրքեր. կը սկսի սրեղծագործութեամբ եւ օրէնքով: Այս օրէնքը քաղաքացիական եւ ընկերային կեանքը կազմակերպող կանոններու գումար մը չէ, այլ Աստուածային օրէնք մըն է. ժողովուրդի հոգեւոր պարարաստութիւնն է:

բ. Պատմական գիրքեր. Աստուծոյ եւ մարդոյ յարաբերութեան պայմանութիւնն է: Աշխարհը եւ մարդը կը սկսի սրեղծագործութեամբ, եւ սակայն հոն չի կենար, կը շարունակուի այդ պայմանութիւնը, կը սկսի տեղէ մը, շարունակական ընթացքով կ'առաջնորդէ մեզ դէպի նպատակակէտ մը՝ յայտնութեան պայմանութեան, փրկութեան պայմանութեան, եւ այդ փրկութեան պայմանութիւնը մենք կը բնորոշենք իբրեւ Աստուծոյ եւ մարդոյ միջեւ եղած Ուխտի պայմանութիւն, որ ունի սկիզբ, ընթացք եւ կատարում, աւարտ:

գ. Բանաստեղծական կամ իմաստութեան գիրքեր: Բանի որ մարդ այս աշխարհի մէջ է, պէտք ունի հոգեւոր դաստիարակութեան: Իմաստութեան գիրքերու նպատակն է մարդուն տալ այն դաստիարակութիւնը, որ մարդս հասցնէ Աստուծոյ նպատակին: Հետեւաբար իմաստութիւնը պայմանութեան հետ կապուած անոր մէկ կարեւորագոյն տուեալն է:

դ. Մարգարէական գիրքեր: Մարգարէական գիրքերը հիմնականին մէջ սպազայի մասին կը խօսին: Այդ իմաստով սպազան այն լրումն է ուր կ'ուղղուի ամբողջ աշխարհը եւ մարդ արարածը:

II. Ներածութիւն Ծննդոց Գիրքի

Ծննդոց գիրքը մեզի կը ներկայացնէ.-

1. Տիեզերքի ծնունդը

2. Երկրագունդի ծնունդը

3. Մարդոյ ծնունդը

4. Մեղքի ծնունդը

5. Փրկութեան ծնունդը

6. Մարդկային ընկերութեան զարգացումը (սկիզբ, ընթանիք, քաղաքներ, արուստերներ):

Ժամանակագրական առումով Ծննդոց գիրքը կարելի է բաժնել երկու մասին.-

1. 1- 11 գլխ, ուր շար կարճ, արագ-արագ նշաններ կան:

2. 12 - 50 գլխ, Աբրահամի եւ նահապետներու պայմանութիւնն է:

Թէւ Ծննդոց գիրքը պարմական գիրք է, բայց միայն պարմութիւն չէ: Անոր մէջ արձանագրուած պարմութիւնները կապ ունին Աստուծոյ փրկագործական ծրագրին ու նպատակին հետ:

Երբ Ծննդոց գիրքի, մանաւանդ առաջին բաժինը կը համեմատենք հին եգիպտական, ասորեստանեան, բաբելական եւ պարսկական կայսրութիւններու պայմանութիւններուն հետ, կը տեսնենք որոշ նիւթերու եւ պարմութեան նոյնութեան եզրեր կան. օրինակ սրեղծագործութեան, ջրհեղեղի եւ աշտարակաշինութեան պարմութիւնները: